«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Հերմինե Գրիգորյան

Մանկապարտեզ՝ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ……. 3-4

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ …….. 5

1.1. Ամանոր …….. 6

1.2. Տեառնընդառաջ ……..…….. 6

1.3. Բարեկենդան …….. 6

1.4. Ծառզարդար ……... 7

1.5. Սուրբ զատիկ ……7

1.6. Համբարձման տոն …… 8

1.7. Պայծառակերպության տոն …….. 8

2. ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ …….. 9-10

2.1. Ծիսական խաղերի իրականացում ……. 12

Դասի պլան……..……13-17

Հավելված 1……..……..……18

Հավելված 2…….……..……19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ …….. 20-21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……... 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքս կրում է «Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում» վերնագիրը: Թեման ընտրելիս հաշվի եմ առել թեմայի **արդիականությունը:** Արդի հասարակության համար կարևորագույն խնդիրներից է բարոյական ազգային նորմերի ճիշտ արժևորումը և նոր սերունդների դաստիարակության գործում դրանց կիրառումը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ազգային տոներն ու ծեսերը, դրանց կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում, դրանց օգտակարությունը երեխաների արժեհամակարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում:

Յուրաքանչյուր ոք, ով մուտք է գործում կրթական միջավայր, ունի առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին արժանի, բարոյական, ազգային և ավանդական արժեքները բարձր պահող անհատներ: Յուրաքանչյուր անձի, երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի և ազգի նկատմամբ, իսկ ժամանակի ընթացքում այս սերը պետք է մեծացնել և ավելացնել: Մեր երկրում երեխաների մեջ ազգային արժեքների ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում, և որպես բովանդակային բաղադրիչ, հաշվի առնելով երեխաների կարողունակությունները՝ պետք է ունենալ համապատասխան վերջնարդյունքներ:

Ազգային արժեքները կարևոր նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում: Նրանք կազմում են ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության և զարգացման երաշխիքը:

Անձի բազմակողմանի ձևավորման և զարգացման համար կարևոր է նրա արժեհամակարգում բարոյական, գեղագիտական, հոգևոր, մշակութային արժեքների ընկալումը: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործը ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական և այլն: Հաշվի առնելով այս բազմաթիվ հանգամանքները՝ մանկավարժության համար **խնդիր է** դառնում երեխաների ազգային գիտակցության ձևավորունը սեփական ժողովրդի պատմության ու մշակութային հենքի վրա:

Մանկավարժի առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումը սերմանելն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից: Ազգային արժեք են իհարկե մեր ազգային տոներն ու ծեսերը:

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ

Կրթական համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի նկատմամբ: Այստեղ է, որ նրա մեջ սերմանվելու են մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաջին հատիկները: Հայ երեխայի բարության ու առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է: Հայ երեխային անհրաժեշտ է հայեցի կրթություն ու դաստիարակություն և մենք՝ մանկավարժներս պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար: Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերնդեսերունդ նրա փոխանցման միջոցները: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը և ազգային տոները: Դրանք հոգեհարազատ են երեխաներին, քանի որ այս դեպքում նրանք դառնում են մասնակից և կատարող: Ազգային արժեք են նաև ծեսերը:

Բազմաբնույթ հիմնահարցերի շարքում կարևորվում է հայեցի դաստիարակությունը: Մանկապարտեզների դաստիարակների ուշադրության կիզակետում է երեխաների մեջ ազգային արժանապատվություն սերմանելու գաղափարը: Աշխատանքներն ընթանում են այնպես, որ «Ես հայ եմ» ազգային պատկանելիության վսեմ զգացումը երեխայի մեջ վերածվում է վարքագծի: Վերջինս էլ նպաստում է նրա՝ իբրև հասարակության լիարժեք քաղաքացու ձևավորմանը:

Տասնյակ տարիներ ինքնամոռաց կերպով տարվել են օտարամոլությամբ և անտեսել մեր ազգային արժեքները: Դրա հետևանքով վտանգվել է մեր ազգային մտածողությունը: Արդարացի է Լևոն-Զավեն Սյուրմելյանը. «Այն հայը, ում կորցնում է ազգային գիտակցությունը... դադարում է մարդ լինելուց: Ես խղճում են նրան...»[1]:

[1] Նախաշավիղ

1.1. ԱՄԱՆՈՐ

Հունվարի 1-ին տարին սկսելու և Նոր տարվա սկզբի տոն նշելու սովորույթը հայերի մեջ ընդհանրացել է ոչ վաղ անցյալում:

Նոր տարվա նախապատրաստությունները ուտելիքների շուրջն էին: Նոր տարվա տոնական խնջույքն սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Շատ տեղերում այդ օրն այցելություններ չէին լինում, սակայն այդ օրը ընտանիքի բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Մանկապարտեզում Ամանորյա տոնակատարությունը հատուկ տեղ է գրավում տոների շարքում: Այն երեխաների ամենասիրված տոներից մեկն է: Երեխաները մեծ ոգևորությամբ են պատրաստվում տոնին, բոլոր երգերը, պարերը սիրով են կատարում և մեծ ոգևորությամբ: Ամանորի նախաշեմին երեխաները պատրաստում են թեմատիկ զարդարանքներ, բացիկներ, որոնցով զարդարում ենք դահլիճը: Պատրաստում են բամբակյա ձնագնդիներ, որոնցով հաճույքով խաղում են միջոցառման շրջանակներում:

1.2. ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Հայ Առաքելական Եկեղեցին Տյառնընդառաջը տոնում է փետրվարի 14–ին, Քրիստոսի ծննդից՝ հունվարի 6-ից քառասուն օր հետո: Այն անշարժ տոն է: «Տեառնընդառաջ»՝ Տիրոջն ընդառաջ: Մեր մանկապարտեզում պարտադիր նշում ենք նաև Տեառնընդառաջի տոնը: Մանկապարտեզի բակում կրակ ենք վառում և շուրջը պտտվելով երգում ենք ծիսական երգեր: Երգում են «Տեառնընդառաջ», «Պսակ–պսակ» երգերը: Դաստիարակների օգնությամբ երեխաները ցատկում են կրակի վրայով, տարբեր հատիկային կուլտուրաներից բաղկացած հատիկեղենը սփռում են շուրջը, իբրև առատության խորհրդանիշ:

1.3. ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Մեր ազգային տոներից է Բարեկենդանը: Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է: Առաջին օրերին պատրաստում էին մեծ քանակությամբ գաթա ու հալվա: Երեկոյան ուտում էին կաթնապուր, մածուն, խաշած ձու: Տանտիկիններն իրենց պահած մթերքներով

շռայլորեն հյուրասիրում էին ընտանիքի անդամներին և հյուրերին: Վերջին օրը, երեկոյան, կաթնապուր ու մածում էին ուտում, վրայից՝ խաշած ձու, ասելով. «բերաններս փակում ենք սպիտակ ձվով: Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելու»,- ակնարկելով, որ ահա սկսվում է Մեծ պասը, որի 49 օրերի ընթացքում այլևս ձու չպիտի ուտեն մինչև Զատիկ:

1.4. ԾԱՌԶԱՐԴԱՐ

Ծառը զարդարում էին շորի պատառիկներով, պտուղներով: Եղել է տոն, որը ժողովուրդն անվանել է Ծառզարդար: Զատիկից մեկ շաբաթ առաջ Հիսուսը, ավանակի վրա նստած, իր աշակերտների հետ մտավ Երուսաղեմ: Ժողովուրդը նրան ցնծությամբ դիմավորեց. մարդիկ իրենց զգեստներն ու արմավենու ճյուղեր էին փռում Հիսուսի ոտքերի տակ և գոչում.

Օրհնությու՛ն Դավթի Որդուն, օրհնյա՛լ է Նա, ով գալիս է Տիրոջ անունով: Այդ օրը եկեղեցիներում Ս. Պատարագ է մատուցվում, մարդիկ ուռենու բողբոջած ճյուղերն օրհնել են տալիս հոգևորականներին և տանում իրենց տուն[2]:

Եկեղեցու մուտքը ամբողջովին հավաքում էին ծաղկե շրջանակով:

1.5.ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը եկեղեցու գլխավոր տոներից է: Տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափարն է: Զատվել բառն այստեղ խորհրդանշում է ոչ միայն տարվա եղանակների զատումը, այլ նաև բնության գույների զատումը: Զատկական ձուն օրինակն է բոլոր աշխարհի, և ինչպես որ իմաստուններն ասում են՝ դրսի կեղևն նմանում է երկնքին, մզղաձևը՝ օդին և սպիտակուցը՝ ջրին, դեղինն էլ երկիրն է, այսինքն՝ մեջը (Թորգոմ վարդապետ): Գրիգոր Տաթևացին էլ նման միտք է արտահայտել ձուն կարմիր ներկելու մասին.

Քրիստոս հարյավ ի մեռելոց: Օրհնյալ է հարությունը Քրիստոսի:

---

[2].https://rimarstakyan.wordpress.com/2020/02/15/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%BD%D5%A5%D6%80%D5%A8/

1.6.ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆ

Հարություն առնելուց հետո Հիսուսը 40 օր երևաց աշակերտներին, խոսեց Աստծո արքայության մասին: Քառասուներորդ օրը նրանց հետ Ձիթենյաց լեռը բարձրացավ: Մկրտվելով ջրում և թաղվելով գերեզմանում՝ մաքրեց հողն ու ջուրը, իսկ հարությունից հետո՝ օդն ու կրակը: Նա մարդկային բնությունը միավորեց Աստծո Խոսքին:

1.7 ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Զատիկին հաջորդող 14-րդ կիրակի օրը մեր Եկեղեցին տոնում է Պայծառակերպության տոնը, որը ժողովրդի մեջ հայտնի է Վարդավառ անվամբ: Եկեղեցական մեկնաբանությամբ Քրիստոսն է նմանեցվում վարդի, ու եթե մինչ իր այլակերպություն որպէս թէ վարդ ի կոկոնի էր, եւ յայլակերպիլն՝ ի թաբօր՝ իբր թէ վարդ վառեցաւ» (Տ. Թորգոմ պատրիարք):

ԳԼՈՒԽ 2.

ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախադպրոցական տարիքի երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրողը ու ակտիվ փոխանցողը: Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացումը ծեսերի, տոների իրագործման ընթացքում տեղի է ունենում բնական, հաղորդակցական միջավայրում և մթնոլորտում: Նախադպրոցական կրթության մեջ ծեսերի կարևորության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ երեխայի անձի զարգացման բոլոր ոլորտները զուգահեռ զարգանում են ծեսին նախապատրաստվելու և այն իրագործելու գործունեության ընթացքում:

Երեխաները ծեսի կազմակերպման ընթացքում շփվում և հաղորդակցվում են: Նրանք յուրովի նախագծում են իրենց անելիքը, քննարկում ընկերների հետ: Ծեսի կազմակերպման ընթացքում դաստիարակը ծեսի ու գործողությունների մասին անհրաժեշտ տեղեկություն է հաղորդում: Երեխաները պատմում են իրենց իմացածը և դրան ավելացնում նորը: Երեխան իր գործունեության բոլոր տեսակների զուգահեռ խոսում է, պատմում, թե ինչ է անում, կարծիք հայտնում, նկարագրում, հարց տալիս ու պատասխանում հարցերի: Այս ամենը բնականաբար, խոսքի զարգացման հատուկ պարապմունքներից ոչ պակաս նպաստում է երեխայի խոսքային կարողությունների զարգացմանը: Նախ նշենք, երեխան ավելի շատ սովորում է լսածը գործողության վերածելով, քան մենակ լսելով: Այդ իսկ պատճառով ծեսերի և տոների իրագործումը երեխաների մասնակցությամբ շատ արդյունավետ միջոց է այդ ամենին հասնելու համար, քանի որ ծեսերի կազմակերպումը ամբողջությամբ խաղ է և գործողությունների շարան:

Ներկայացնենք, թե ծիսական գործողությունները ինչպես են ազդում երեխայի խոսքի, ինչպես նաև խոսքին նպաստող մյուս ոլորտների՝ սոցիալական, հուզական,

մտավոր զարգացման վրա: Շատ կարևոր է երեխային ներգրավել ծեսի նախապատրաստական աշխատանքներին: Այդ նախապատրաստական աշխատանքները հիմնականում ծիսական պարագաների պատրաստումն է: Այս գործողության ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում նկարելու, ներկելու, կտրելու և տարբեր նյութերից ծիսական պարագաներ պատրաստելու: Նրանք իրենց երևակայությամբ կարող են հորինել ու ավելացնել նոր դրվագներ, (այսինքն խաղալ) այն ինչ իրենց հոգուն ու միջավայրին է հարազատ:

2.1. ԾԻՍԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ինչպես գիտենք խաղը երեխայի խոսքի զարգացման ամենակարևոր միջոցն է: Ծեսերի ամբողջական իրականացումը ինքնին կարելի է համարել խաղ, սակայն մենք ունենք պարզ ու գեղեցկ ծիսական խաղեր, որոնց իրականացման միջոցով կարելի է ունենալ մեծ արդյունք՝ երեխայի զարգացման հարցում: Ծեսն այն միջավայրն է, որը երեխային տալիս է հնարավորություն խաղալ ազատ կամ ունենալ դերային խաղեր:
Ազատ խաղը երեխային տալիս է ինքնադրսևորվելու հնարավորություն: Ծեսի ընթացքում դերային խաղը օգնում է երեխային յուրացնել ծանոթ ու անծանոթ երևույթները, հասկանալ դրանց դերն ու նշանակությունը, իրենց վրա որոշակի պատասխանատվություն վերցնել, նոր տեղեկություններ ստանալ ու զարգացնել ունեցած հմտությունները:

Ամենակարևորը՝ երեխաները հայտնաբերում են, որ մյուսների հետ խաղալն ու աշխատելը հաճելի է: Այս ամենը շատ արդյունավետ ազդում է երեխայի սոցիալակն զարգացումման վրա: Խաղի ժամանակ նրանց մոր դրսևորվում է վախեր (օրինակ՝ ձուն կռվեցնելու ժամանակ կարող է իր ձուն կոտրվել), հույսեր (որ ամպայման ինքն է հաղթելու), ուրախություն (հաղթելու դեպքում): Ծիսական խաղը շատ կարևոր ազդեցություն է գործում երեխայի մտավոր զարգացման վրա: Ինչպես գիտենք օրինակ կան ձվախաղեր ու ընկուզախաղեր, որոնք զարգացնում են երեխայի իմացական հմտությունները: Ծիսական երգն ու երաժշտությունը մեծ ազդեցություն է գործում երեխայի զարգացման հետևյալ ասպեկտների վրա՝ զգացմունքային, սոցիալական, լեզվական: Ծիսական երգն ու երաժտությունը զորեղ միջոց է երեխայի սոցիալական զարգացումը խթանելու համար: Երեխաներին մեծ հաճույք են

պատճառում ծիսական այն երգերը, որոնք կազմակերպվում են խմբակային և երկխոսության տեսքով: Ծիսական երգերը իրենց մեջ պարունակում են արարողակարգեր, որոնց միջոցով երեխաները գովում են մեկը մյուսին, նվիրում ծաղիկներ, քաղցրավենիք, ուտելիք և այլն, ինչն էլ երգի և երաժշտության հետ համատեղ էլ ավելի է նպաստում սոցիալական զարգացմանը: Ծիսական երաժշտությունը կարող է զարգացնել երեխայի լեզվական կարողությունները: Մեղեդին հոկում է հիշողությունը, հետևաբար երեխան հիշելով երգի բառերը, զարգացնում է իր բնական խոսքը: Երեխաաները կարող է ցանկանալ հորինել իրենց սեփական երգերը՝ իմացած կամ ծանոթ մեղեդիների օգտագործմամբ, այդպիսով պատմելով իրենց պատմություններն ու արտահայտելով իրենց անհատական զգացողությունները:

Նախակրթարանում գործունեության հիմնական ձևերը իրականացվում են խաղի միջոցով: Խաղը զարգացնում է երեխայի

- ուշադրությունը
- հիշողությունը
- երևակայությունը
- ստեղծագործելու կարողությունը
- հաղորդակցման կարողությունը
- շարժողականությունը

Թեմատիկ միջոցառումների կողքին այսօր իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ազգային տոներն ու միջոցառումները՝ Բարեկենդանը, Զատիկը, Տեառնընդառաջը: Դահլիճը ձևավորվում է ազգային զարդանախշերով, և նոր շունչ է ստանում ազգային տարազը, որով երեխաները զգեստափոխվում և հոգեպես կապվում են իրենց նախնիների հետ: Այս տոները վերածվում են հանդիսության՝ շնորհիվ գեղեցիկ, ուրախ երգերի, որոնք երեխաների մոտ ձևավորում են որոշակի երաժշտական ճաշակ՝ նրանց մոտեցնելով հայ մշակույթի արմատներին:

Այցելեցինք Ազատանի Սուրբ Հարություն Ստեփանու եկեղեցի։ Արժանապատիվ տեր Մաքար քահանան Գալամդարյանից ստացան օրհնություն։ Երեխաներին քահանան բացատրեց, որ եկեղեցին Աստծո տունն է, նաև մեր բոլորի տունն է։ Եկեղեցի գալով մենք մեզ շատ լավ ենք զգում։ Երեխաներին բացատրեց, որ ինչպես մեր տանն ենք տոներ նշում, այնպես էլ եկեղեցում, օրինակ՝ Սուրբ Ծնունդ, Սուրբ Հարություն՝ Զատիկ, Վարդավառ և այլն։ Այս տոների ժամանակ մայրիկները տանը համեղ ուտելիքներ են պատրաստում, մինչև ուտեստները համտեսելը, պետք է այցելել եկեղեցի, եկեղեցում տոնել նոր միայն շարունակել տանը այդ ժամանակ տոնը կլինի լիարժեք։ Քահանայի հետ «Հայր մեր» աղոթքն արեցինք, այնուհետև գնացինք «Սուրբ Հարություն» կրթական կենտրոն, (եկեղեցուն կից գործող) ծանոթացանք կենտրոնի գործունեությանը։ Մեզ դիմավորեց ընկեր Գոհարիկը։ Երեխաների հետ դիտեցինք /թեմատիկ/ մուլտֆիլմ։ Խոսվեց, բացատրվեց, որ աղոթքը դա Աստծո հետ զրույց է։ Երեխաներին բաժանվեց ուրվագծված նկարներ, որտեղ պատկերված էր առօրյայում տարբեր պարագաներում աղոթելու պատկերներ։

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՈՒՆՔ

Պարապունքը անցկացրել ենք ավագ խմբում։

Տեվողություն՝ երկու պարապունք, խոսքի զարգացում+կերպարվես։

Թեման՝ «Սուրբ Զատիկ», «Ձվեր Զատկի համար» հեղինակ՝ Գ.Մովսիսյան, ինտեգրված պարապմունք

Նպատակը՝ Խորացնել պատկերացումները ազգային տոների, ծեսերի մասին

Խնդիրներ՝

- ✓ Ձևավորել ազգային և համամարդկային արժեքների վերաբերյալ տարրական պատկերացումներ
- ✓ Զարգացնել երկխոսության ընթացքում հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունները
- ✓ Սովորեցնել ավարտել անավարտ պատմությունը՝ ցուցաբերելով ստեղծագործականություն և ինքնուրույնություն
- ✓ Մշակել ստեղծագործական մտահաղացումներով նոր ավարտ հյուսելու կարողություն։

Նյութեր՝ սպիտակ թուղթ, գունավոր մատիտներ, գունավոր թղթեր, մկրատ, սոսինձ, վրձին, ձվիկներ, փայտից ձվիկներ, ձվի կաղապարներ, ձուկ, չամիչով փլավ, ընկույզ։

Ունենալ Գ. Մովսիսյանի «Ձվեր Զատկի համար» պատմվածքը, համապատասխան նկարներ։

Մեթոդներ՝ զույգերով, փոքր և մեծ խմբերով, անհատական

Ընթացքը՝

Դաստիարակը հարցնում է երեխաներին, ցույց տալով սեղանին դրված այն պարագաները և նախուտեստները, որոնք խորհրդանշում են «Զատիկ» տոնը։

Բացատրում է խորհուրդն ու նշանակությունը, անհրաժեշտությունը, կարևորությունը, տալով գաղափար տոնի խորհրդի մասին։

«Մտածիր՝ զո՛ւյգ-կազմիր-կիսվի՛ր» ռազմավարության միջոցով երեխաները մտքեր են փոխանակում զույգերով։

Յուրաքանչյուր երեխա իր զույգին լսածի մասին տալիս է մեկ հարց։

1. Ո՞րն էր ամենագեղեցիկ տոնը Ձեզ համար։
2. Ինչու՞ եք այդ տոնը շատ սիրում։

Մեծ խմբով աշխատանք 2-3 երեխա հայտնում են իրենց կարծիքը։

Երգ «Յալալի» հայ. ժող երգ։

Դադարներով ընթերցանություն

Երեխաներին նստեցնել շրջանաձև։ Ընթերցել «Ձվեր Ձատկի համար» պատմվածքը, յուրաքանչյուր դադարից հետո դաստիարակը հարց է տալիս և երեխաները զույգերով քննարկում են.

1. Ինչի՞ մասին էր այս հատվածը։ Սպասել մինչև երեխաները կմտածեն, կարող են փոքր խմբերով քննարկել և լսել մի քանի կարծիք։ Քննարկումը կարող ենք անցկացնել «Խոսող փայտիկ» մեթոդով, որպեսզի բոլոր երեխաները հնարավորություն ունենան ասելու իրենց կարծիքը և փայտիկը փոխանցեն իրենց ընկերոջը։
2. Ի՞նչ շարունակություն կունենա պատմությունը։ Սպասել մինչև երեխաները կմտածեն, լսել մի քանի կարծիք։

Տեքստի ավարտից հետո բաց հարցերի միջոցով ամփոփել նյութը։

1. Ինչի՞ մասին էր պատմվածքը։
2. Ի՞նչ էր ուզում անել տատիկը։
3. Ինչու՞ կոտրվեցին ձվերը։
4. Ի՞նչ որոշեց տատիկը։
5. Ավարտին հասցնել կիսատ թողած պատմությունը՝ ինքնուրույն ստեղծագործությամբ։

Խաղ- «Ձվակռիվ»։

Երգ «Զարկ բոլոճիկ զարկ» հայկական ժողովրդական երգ։ Երգի ավարտից հետո իրականացնել աշխատանք կենտրոններում։ Երեխաներին տրվեց հնարավորություն ընտրել, թե ո՞ր կենտրոնում է ուզում աշխատել։

Խոսքի զարգացում։ Վերապատմել պատմվածքի այն հատվածը, որը իրենց դուր եկավ։

Ծեփ։ Աղի խմորից ծեփել ձվիկ՝ տարբեր չափի և գույնի։ Զարգացնել ծեփոնին ցանկալի ձև տալու, ստեղծագործելու կարողությունը։

Ապլիկացիա։ Նախապես դրված են թուղթ, սոսինձ, մկրատ, գույնզգույն ուղղանկյունաձև թղթեր։ Թղթի սուր անկյունները կտրելու եղանակով ստանալ գեղեցիկ ձվի պատկեր։

Նկարչություն։ Փոքրիկ «Վարպետներին» առաջարկել վերցնել պատրաստի ձվի կաղապարը, վրան աշխատել, նախշազարդելու և զարգացնել սեփական ձեռքերով աշխատանքը գեղեցկացնելու կարողությունը։

Երգ «Զատի՛կ, դու բարով եկար» երգը։

Վերջնարդյունք։ Իմանա ազգային որոշ ծեսերի և տոների մասին։ Պատմի հեքիաթներ, ավանդույթներ։

Կապը Չափորոշչի հետ

խհ/ե/ /բ/ /ժ/ ի. /ա/ /բ/ /գ/

ՀՍԱ /ա/ /բ/ /գ/ /դ/ /ե/ /ը/ ԻՍԱ /ա/

Խոսք և հաղորդակցում.

ե/ճանաչում է աշխարհը փորձարկումների, ինքնուրույն գործողությունների միջոցով, խմբավորում է առարկաները, պատկերները ըստ ընդհանուր հատկանիշների։

թ/ Նախաձեռնում է հաղորդակցում մեծերի ու հասակակիցների հետ, հաղորդակցման ընթացքում գնահատում է ոչ միայն իր այլև դիմացինի խոսքը՝ շտկելով սխալ արտաբերած հնչյունը, բառը կամ նախադասությունը։

/ժ/ Հարցեր է տալիս մեդիայում լսած բովանդակության մասին, քննարկում է դրա նպատակը:

Իմացական ոլորտ:

ա/Սանը վերլուծում է երևույթների պատճառահետևանքային կապերը, ներկայացնում իր պատկերացումներն ու վերաբերմունքը:

բ/ Նկարագրում և մեկնաբանում է շրջապատող միջավայրում ընթացող երևույթների, սեփական որոշումներն ու գործողությունները:

գ/Առաջադրանքներ կատարելիս դրսևորում է ճանաչողական հետաքրքրություն և ստեղծշագործականություն:

ե/ Ունի պատկերացումներ տնտեսական պարզ հասկացությունների, ազգային և այլ ազգերի մշակութային առանձնահատկությունների, հայրենի երկրի մասին:

ը/Հասկանում է մեդիա գործիքների կիրառության բազմազանությունը մեծահասակի աջակցությամբ հստակ նպատակով կարողանում է կիրառել դրանք կրթական և խաղային այլ միջավայրում:

Հուզական սոցիալ անձնային ոլորտ

ա/ Սանն արտահայտում է իր հույզերն ու զգացմունքները բառերով և հաղորդակցման ոչ բառային ձևերով:

բ/Տարբերակում է, վերլուծում իր ցանկություններն ու նախասիրություններորը, կարողանում է ընտրել, հիմնավորել և բարձրաձայնել ընտրությունը:

գ/Հասկանում, ընդունում է ընկերների հույզերն ու զգացմունքները, ցանկություններն ու նախասիրութունները:

դ/Հարաբերություններում դրսևորում է սոցիալական զգացմունքներ, վերահսկում և կառավարում իր հուզականությունը, կարողանում է հուզական մակարդակում կանխատեսել գործունեության արդյունքները:

ե/ Կառուցում է փոխվստահելի գործընկերային հարաբերություններ մեծահասակների հետ, պահպանում է բարեվարքային կանոնները:

ը/ Ունի սուբյեկտիվ վերաբերմունք արտաքին աշխարհի հանդեպ, ինքնավերլուծության է ենթարկում սեփական վարքագիծն ու անձնային հատկութկունները։

Ինքնասպասարկման անվտանգության առողջ ապրելակերպի ոլորտ

ա/ սանը դրսևորում է ինքնասպասարկման հմտություններ, ինքնուրույն պահպանում է անձնական հիգիենայի կանոնները

Հաջորդ օրը

Առավոտյան երեխաները մանկապարտեզ եկան մեծ ոգևորությամբ, քանի որ պլանավորել էին մանկապարտեզում պատրաստել տոնական գաթա։

Կենտրոններով աշխատանք

Դերախաղի կենտրոն-պատմվածքը ներկայացնել դերախաղի միջոցով։

Մաթեմատիկա-տեքստից ընտրել մի ընդարձակ նախադասություն։ Հաշվել քանի բառ ունի նախադասությունը և դնել թվային քարտեր։

Կառուցողական կենտրոն- Խորանարդիկներով և երկրաչափական պատկերներով կառուցել տեսարան պատմվածքի որևէ հատվածից (տուն, սեղան, աթոռ, սեղանին դրված ձվեր)։

Արվեստի կենտրոն-պատրաստել գաթա ըստ բաղադրիչների՝ /ալյուր, ձու, բուսայուղ շաքարավազ, ջուր և այլն/։ Երեխաները դաստիարակի օգնությամբ պատրաստելու են խմորը, իսկ հետո տեղափոխում ջեռոց։

Մինչև ջեռոցում եփվում է գաթան, կազմում ենք շրջան երգում, պարում մեր ազգային երգեր։ «Ճոր–պար», ժողովրդական երգ։ Շուրջպարի մեջ ներգրավել բոլոր ընկերներին։ Եփելուց հետո համտեսել հայկական տոնական գաթան։

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Դիտարկումը կատարվեց ավագ խմբում

Բաղադրիչ՝ ԽՁ

Տեսակը՝ Ինտեգրված

Թեման՝ «Սուրբ Զատիկ» Գ. Մովսիսյանի «Ձվեր զատկի համար ստեղծագործության ընթերցում:

Պարապմունքը պլանավորված է, ձևավորված են պարապմունքի թեման, նպատակը, քայլերը և վերջնարդյունքը: Քայլերը բխում են սահմանված նպատակից և փոխկապակցված են: Դաստիարակի կողմից կիրառված մեթոդը, կազմակերպված փոքրիկ բեմականացումը, երեխաների մոտ մոտիվացիա է ստեղծում, խանում է նրանց հետաքրքրությունը: Կապը չափորոշչի և մյուս բաղադրիչների միջև ապահոված է՝/ԻՇԱ, ԿԿԱ/: Պարապմունքը հագեցված է դիդակտիկ նյութերով, ստեղծագործության դրվագներին համապատասխան նկարներով: Դաստիարակը խոսում է պարզ, գրագետ, ունի խոսքի չափավոր տեմպ, գեղեցիկ ձայնային ինտոնացիա: Խմբասենյակի ջերմ, անշակշանդ և անմիջական մթնոլորտը ապահոված է: Պահպանվեց պարապմունքի կառուցվածքը և տևողությունը: Խմբասենյակի աշխատանքային կենտ տոները հագեցված են: Սաները ցուցաբերում են ակտիվ մասնակցություն, նրանց մոտ զարգացած է խոսքի հնչյունային կուլտուրան, կապակցված խոսքը, բառապաշարը, երկխոսության մեջ մտնելու կարողությունը: Դաստիարակը իր աշխատանքը անկցկացրեց ԽԻԿ համակարգով: Կշռադատման փուլով ամփոփվեց կերպարվեստային գործունեությամբ, որի արդյունքում պարզ դարձավ, որ երեխաների մոտ զարգացած է ստեղծագործական

միտքը, ձեռքի աշխատանքը։ Ձևավորված է կերպարվեստի հանդեպ երեխաների հետաքրքրությունը։ Դաստիարակի կողմից քայլերը բերեցին վերջնարդյունքներին։

Մեթոդիստ՝ Շ. Իլիկյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Դիտարկումն անցկացվել է ավագ «ա» խմբում։ Պարապմունքն ինտեգրված էր, թեման՝ «Սուրբ Զատիկ»։ Ձվեր Զատկի համար»։ Պարապմունքը պլանավորված էր, հստակ ձևակերպված էր թեման, նպատակը։ Դաստիարակը իր առջև դրել էր խնդրրներ, որոնց լուծմամբ հասավ նպատակին և ապահովեց վերջնարդյունք։ Առկա էին պարապմունքի համար անհրաժեշտ դիդակտիկ պարագաները, սարքավորումները՝ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար։ Փուլերի սահուն հերթագայումը պահպանվեց։ Պահպանված էր կապը չափորոշչի հետ, ապահովված էր միջբաղադրիչայօն կապը՝ ԽՁ, ԿԿԱ, երաժշտություն։

Դաստիարակը խոսում էր չափավոր տեմպով, պարզ, հասկանալի ու գրագետ։ Խմբասենյակում տիրում էր, դրական, ջերմ և համագործակցային մթնոլորտ։ Երեխաները ակտիվ էին, անկաշկանդ։ Դաստիարակը հարգալից էր յուրաքանչյուր երեխայի նկատմամբ, արձագանքում էր նրանց կարիքներին, ցուցաբերում էր անհատական մոտեցում։ Դաստիարակը ապահովեց բոլոր սաների ներգրավվածությունը։ Պարապմունքի ընթացքում դաստիարակը կիրառեց զանազան մեթոդներ, հնարներ, խաղեր՝ նպատակին հասնելու համար։ Նման մոտեցումը օգնեց դաստիարակին զարգացնելու երկխոսելու և մենախոսելու, հարցեր ուղղելու, սոցիալականացվելու, խմբով և ենթախմբով աշխատելու, ստեղծագործելու, գեղեցիկը նկատելու և գնահատելու, աշխատանքը ավարտին հասցնելու կարողությունները։ Պարապմունքի նպատակին հասնելու և վերջնարդյունք ապահովելու համար մեծ դեր ունեցավ երեխաների հետ թեմայի շուրջ զրույցը, նյութերի ցուցադրումը և թեմատիկ մուլտֆիմլի դիտումը։

Հետազոտական աշխատանքի ընտրությունը շատ գովելի է, քանզի դեռ նախադպրոցական տարիքից պետք է սկսել երեխայի մեջ սերմանել սեր դեպի հայրենիք, մշակույթ, կրոն: Մեր երկրում դեռ մանկուց պետք է ստանա հայեցի, քրիստոնեական դաստիարակություն, արժևորի գեղեցիկը, բարին ճանաչի և իմանա ազգային և քրիստոնեական ծեսերն ու տոները:

Տնօրեն՝ Ա. Մնացյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով հետազոտական աշխատանքի արդյունքում, տեսական գրականության ուսումնասիրման արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների,

- Որ ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունը՝ դա ազգային մշակույթի յուրացումն է, երաժշտական ճաշակի զարգացումն է:
- Նախադպրոցական մանկության շրջանում երեխայի ամենակարևոր ձեռքբերումներից մեկը մայրենի լեզվին տիրապետելն է: Լեզուն միջոց է, որի օգնությամբ մարդիկ հաղորդակցվում են միմյանց հետ, փոխանակում մտքեր և հասնում փոխադարձ ըմբռնման:
- Երեխայի խոսքային և հաղորդակցական կարողությունների զարգացման համար առավել արդյունավետ ձևը երեխայի խոսքի զարգացման համար բնական և լիարժեք հաղորդակցության միջավայր ստեղծելն է, մի մթնոլորտ, որտեղ երեխան խոսելով՝ խոսել և շփվելով շփվել է սովորում:
- Երեխայի խոսքի ձևավորման գործընթացը կառուցվում է ոչ միայն ընդհանուր դիդակտիկական, այլև որոշակի մեթոդական սկզբունքների հիման վրա, դրանք են՝ զգայական, մտավոր և խոսքի զարգացման փոխկապակցվածության, հաղորդակցական գործունեության Լեզվազգայունակության զարգացման, լեզվական երևույթների տարրական ձևավորման, խոսքի տարբեր կողմերի համակցման, խոսքային գործունեության դրդապատճառների հարստացման սկզբունք, ակտիվ խոսքային կիրառում ապահովող սկզբունքները:

- Նախակրթարանում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող ու ակտիվ փոխանցող։
- Ծեսի կազմակերպման ժամանակ երեխան իր գործունեության բոլոր տեսակներին զուգահեռ շփվում, հաղորդակցվում է իր հասակակիցների կամ մեծահասակներնի հետ. խոսում է, պատմում, թե ինչ է անում, կարծիք է հայտնում, նկարգրում, մեկնաբանում, հարց տալիս ու պատասխանում հարցերին։ Այս ամենը, բնականաբար, խոսքի զարգացման հատուկ պարապմունքներից ոչ պակաս նպաստում է երեխայի խոսքային կարողությունների զարգացմանը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ, Ե., 2005, էջ 321:
2. Մկրտչյան Ս., Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Ե., 2010, էջ 101:
3. Քաջբերունի, Հայկական սովորույթներ Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գ. 7-8, Թ., 1901, էջ 168:
4. Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Ե.,2004
5. 5-6 տարեկաններ. Դաստիարակի ուղեցույց
6. Երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ Նախադպրոցական մանկավարժություն
7. Արթուր Շահնազարյան «Երաժշտությունը նախակրթարանում»
8. Արթուր Շահնազարյան «Կաքավիկ» երգարան, Երևան 2008թ.:
9. Նախաշավիղ ամսագիր, Երևան 2009թ. 3-4 համար
10. Հրանուշ Խառատյան -Առաքելյան, «Հայ ժողովրդական տոները»
11. Խաղը, շարժումը, հարվածային, շրխկան նվագարանները՝ նախակրթարանու
12. Ազգային ծեսերին, խաղերին՝ նոր կյանք
13. Նախակրթարանում երաժշտության ծրագրի մեթոդական մշակում:
14. Ионин Л. Г. Социология культуры, М., 2004, с. 166.

15. С. А. Козлова, «Дошкольная педагогика».